

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 1 (86)

2020 թ.

Գլխավոր խմբագիր՝
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
ի.գ.դ., պրոֆ. Գագիկ Ղազինյան

Խ մ ք ա գ ր ա կ ա ն խ ո ղ Ի ո լ ր ղ

Սամվել Դիլբանդյան - ի.գ.դ.

Գլխավոր խմբագրի տեղակալ

Կարեն Գևորգյան - ի.գ.թ

Գլխավոր խմբագրի տեղակալ

Աշոտ Պետրոսյան -

պատասխանատու քարտուղար

Գևորգ Դանիելյան - ի.գ.դ.

Նիկոլայ Ստոյկո - ի.գ.դ.

Հարություն Խաչիկյան - ի.գ.դ.

Արմեն Հայկյանց - ի.գ.դ.

Ղավիթ Ավետիսյան - ի.գ.թ.

Արթուր Վաղարշյան - ի.գ.դ.

Սերգեյ Առաքելյան - ի.գ.դ.

Վահե Հովհաննիսյան - ի.գ.դ.

Տարոն Սիմոնյան - ի.գ.թ.

Հիմնադիր և հրատարակիչ՝
ՀՀ իրավաբանների միություն,
ԵՊՀ իրավագիտության
ֆակուլտետ

Խմբագրության հասցեն՝

ՀՀ, 0025 Երևան,

Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ

իրավագիտության ֆակուլտետ:

Հեռ. 060-71-02-47

Էլ. կայք՝

[http://ysu.am/faculties/hy/Law/
section/structure/amb/48439](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb/48439)

Խմբագրությունը կարող է

հրապարակել նյութեր՝ համամիտ

չլինելով հեղինակների

տեսակետներին:

12 համակարգչային էջից ավելի

չպատվիրված նյութերը չեն

ընդունվում:

e-mail: a_petrosyan@ysu.am

Ղախիչ՝ 77771

Տպագրական 8 մամուլ

Գրանցման թիվը՝ 798

Տպաքանակը՝ 500

Գինը՝ պայմանագրային

Հանձնված է շարվածքի

24.12.2019

Հանձնված է տպագրության

15.05.2020

СОЮЗ ЮРИСТОВ РА
ЮРИДИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ ЕГУ

ГОСУДАРСТВО И ПРАВО

Номер 1 (86)
2020 г.

Главный редактор:
академик НАН РА,
д.ю.н., проф. Гагик Казинян

Учредитель и издатель:
Союз Юристов РА,
Юридический факультет ЕГУ

Редакционный совет

Самвел Дилбандян - д.ю.н.

зам. главного редактора

Карен Геворгян - к.ю.н.

зам. главного редактора

Ашот Петросян -

ответственный секретарь

Геворг Даниелян - д.ю.н.

Арутюн Хачикян - д.ю.н.

Николай Стойко - д.ю.н.

Армен Айкянц - д.ю.н.

Давид Аветисян - к.ю.н.

Артур Вагаршян - д.ю.н.

Сергей Аракелян - д.ю.н.

Ваге Оганнесян - д.ю.н.

Тарон Симонян - к.ю.н.

Адрес редакции:
РА, 0025 Ереван,
ул. Алека Манукяна 1,
юридический факультет ЕГУ.
Тел.: 060-71-02-47
e-mail: a_petrosyan@ysu.am
web: [http://ysu.am/faculties/hy/Law/
section/structure/amb/48439](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb/48439)

8 усл. печ. л.
Тираж: 500
Сдано в набор 24.12.2019
Подписано к печати 15.05.2020

ԴԱՏԱԽԱՋԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ, ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՍՏՈՒԳՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

Տիգրան Ղազարյան

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ

Հանցագործությունների մասին հաղորդումների ընդունման, գրանցման, ստուգման և նախապատրաստված նյութերի հիման վրա քրեական գործի հարուցման հարցի լուծման ընթացքում իրավապահ մարմինների թույլ տված ցանկացած խախտում ուղղակիորեն հանգեցնում է մի կողմից հաղորդում ներկայացրած անձանց, ենթադրյալ տուժողների, մյուս կողմից ենթադրյալ հանցանք կատարած անձանց իրավունքների և օրինական շահերի ոտնահարման: Այդ իսկ պատճառով քրեական վարույթ նախաձեռնելու փուլում օրինականության ապահովման նպատակով օրենսդիրը մատնանշված մարմինների գործունեությունը դարձրել է դատախազական հսկողության և դատական վերահսկողության առարկա՝ կարևորելով նաև քրեական գործի հարուցման փուլի դերն ու նշանակությունը:

Պատճառն այն է, որ ինչպես քրեական գործերն անհիմն չհարուցելը, այնպես էլ քրեական գործի հարուցումն անհիմն մերժելը հանգեցնում են բացասական հետևանքների հանցավորության դեմ արդյունավետ պայքարի կազմակերպման հարցում:

Դատախազական հսկողությունն ըստ իրավական միջոցների ուղղվածության դասակարգվում է հետևյալ խմբերի՝ 1) իրավախախտման հայտնաբերմանն ուղղված իրավական միջոցներ (նյութեր պահանջել և այլն), 2) իրավախախտման վերացմանն ուղղված իրավական միջոցներ (միջնորդագրեր ներկայացնել և այլն), 3) իրավախախտումների կանխմանն ուղղված իրավական միջոցներ (պաշտոնատար անձանց գործողությունների և որոշումների սանկցավորումը, որոշակի գործողություններ կատարելու համաձայնություն տալը և այլն)¹:

Ակնհայտ է, որ դատախազական հսկողության նպատակը ոչ միայն իրախախտումների հայտնաբերումն է ու վերացումը, այլ նաև դրանց կանխարգելումը: Իսկ քրեական գործի հարուցման փուլում դատախազական հսկողության խնդիրներն են՝ հանցագործությունները հաշվառումից թաքցնելու դեպքերի հայտնաբերումը, վերացումը և նախազուշացումը, քրեական գործի հարուցումը կամ քրեական գործի հարուցումը մերժելու անհիմն փաստերի բացահայտումը²:

Ինչպես արդարացիորեն նշում է Մ. Ա. Բազմետը, օժտված լինելով իշխանական-կարգավորիչ լիազորություններով՝ հանցագործությունների մասին հաղորդումների և դիմումների քննության նկատմամբ դատախազական հսկողությունը պետք է կրի կանխարգելիչ բնույթ³:

Համանման դիրքորոշում է արտահայտել նաև Վ. Բելյակը՝ նշելով, որ դատա-

¹ Տե՛ս **Дранников В.Н.** Прокурорский надзор. Общая часть: Учебное пособие. – Таганрог: Изд-во ТРТУ, 2004. էջ 120:

² Տե՛ս ՀՀ քրեական դատավարություն: Հատուկ մաս/ **Ղազինյան Գ.Ս.** և ուրիշ. – 4-րդ իրատարակություն. Լրացումներով և փոփոխություններով. – Եր.: ԵՊՀ իրատ., 2019, էջ 46:

³ Տե՛ս **Багмет М. А.** Рассмотрения заявлений и сообщений о преступлениях // Уголовный процесс. – 2006. – № 6. – էջ 34:

խազական հսկողության նպատակը թույլ տրված օրենքների խախտման բացահայտումն ու վերացումն է, ինչպես նաև խախտումների նախականիտումը¹:

Ա. Մասլակովը նույնպես շեշտում է, որ հսկողությունն իրավական նորմերի կատարումն իրավասու մարմնի կողմից անընդմեջ դիտարկելն է, որն ուղղված է օրենքով նախատեսված հատուկ լիազորությունների միջոցով կանխել և վերացնել օրենքի խախտումները²:

Համաձայնելով հիշյալ հեղինակների կարծիքներին՝ գտնում ենք, որ քրեական վարույթ նախաձեռնելու փուլի նկատմամբ դատախազական հսկողությունն առավելապես նպատակ է հետապնդում կանխարգելել վարույթն իրականացնող մարմնի կողմից անհիմն և չպատճառաբանված որոշումների կայացումը և գործողությունների կատարումը, միևնույն ժամանակ հայտնաբերել պաշտոնատար անձանց կողմից թույլ տրված իրավախախտումները, վերացնել դրանց բացասական հետևանքները:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ քրեական դատավարությունում, որտեղ օրենքի հիման վրա թույլատրվում է քաղաքացիների իրավունքների և ազատությունների առավել լայնածավալ սահմանափակումների կիրառումը, դատախազական հսկողությունը պետք է լինի իրական, այլ ոչ թե հանդես գա որպես օրինականության պահպանման դեկլարատիվ ինստիտուտ³:

Դատախազական հսկողության պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ քրեական գործի հարուցման փուլում հաճախ են խախտվում անձանց իրավունքներն ու օրինական շահերը՝ բավարար հիմքերի առկայության դեպքում քրեական գործի հարուցումը մերժելու մասին ապօրինի որոշումների կայացմամբ: Մասնավորապես՝ 2018 թվականի ընթացքում հանցագործությունների քննության վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազի հաղորդման ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Հայաստանի Հանրապետությունում նախապատրաստվել է 52.245 նյութ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 46.103-ի փոխարեն: Փաստորեն, դրանց թիվը նախորդ տարվա համեմատությամբ աճել է 8.142-ով, ինչը կարելի է բացատրել ոչ միայն հանրապետությունում արձանագրված հանցագործության դեպքերի թվի աճով, այլև դրանց մասին հաղորդումները գրանցվելուց հետո դատախազության դրսևորած հետևողականությամբ:

Ընդգծենք, որ հիշյալ ժամանակահատվածում նախապատրաստված 54.245 ավարտված նյութից 33.929-ով կամ 62.5%-ով կայացվել է որոշում՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին, որոնցից 26.499-ը կամ 78.1%-ը՝ արդարացման, 7.430-ը կամ 21.9%-ը՝ ոչ արդարացման հիմքով:

Համեմատության համար նշենք, որ 2017 թվականին նախապատրաստված 46.103 ավարտված նյութից 30.524-ով կամ 66.2%-ով կայացվել է որոշում՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին:

2018 թվականի ընթացքում նախապատրաստված 54.245 նյութից 18.522-ով կամ 34.1%-ով հարուցվել է քրեական գործ, որոնցից 356-ը կամ 1.9%-ը՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը վերացնելով: Նշված 356 քրեական գործից 30-ը հարուցվել է ՀՀ գլխավոր դատախազի կողմից, մյուսները՝ հսկող դատախազների կամ նրանց անմիջական վերադասների:

¹ St`u **Беляев В. П.** Контроль и надзор как формы юридической деятельности: Вопросы теории и практики. Автореф. дисс. ... д.- ра юрид. наук. Саратов, 2006, էջ 59:

² St`u **Маслаков А. В.** Надзор как процессуальная форма защиты публичных интересов: Теоретические проблемы. Автореф. дисс. ... канд. юрид. наук. Саратов, 2009, էջ 82:

³ St`u **Мыцыков А. Я.** Проблемы совершенствования правоприменительной деятельности прокуратуры // Юридический мир. – 2011. – № 12. – էջ 31:

Համեմատության համար նշենք, որ 2017 թվականի ընթացքում նախապատրաստված 46.103 նյութից 14.380-ով կամ 31.2%-ով հարուցվել է քրեական գործ, որոնցից 295-ը կամ 2.0%-ը՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը վերացնելով: 295 քրեական գործից 31-ը հարուցվել է ՀՀ գլխավոր դատախազի, մյուսները՝ հսկող դատախազների կամ նրանց անմիջական վերադասների կողմից¹:

Ներկայացված վիճակագրական տվյալների քննությամբ գտնում ենք, որ այն պայմանավորված է ինչպես դատախազական հսկողության կազմակերպման ոչ լիարժեք հետևողականությամբ, այնպես էլ այս ոլորտը կարգավորող օրենսդրական նորմերում առկա բացերով և անկատարությամբ, որոնց առավել հանգամանակից կանդրադառնանք ստորև:

Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ քրեական գործի հարուցման փուլում հանցագործությունների մասին հաղորդումների ընդունման ընթացակարգի վերաբերյալ քրեադատավարական օրենքը պարունակում է միայն ընդհանրական նորմեր, իրավակարգավորումներ: Տպավորություն է ստեղծվում, որ օրենսդիրը, համարելով այդ գործունեությունը զուտ տեխնիկական գործընթաց, պատշաճ ուշադրության չի արժանացրել դրան, իսկ հանցագործությունների մասին հաղորդումների, դիմումների, հաշվառման, ընդունման, գրանցման կարգը, գործողությունների հաջորդականությունը, ժամկետները կարգավորել է գերատեսչական ակտերով:

Ակնհայտ է, որ քրեադատավարական գործունեության այդպիսի կարգավորումը, երբ հանցագործության մասին հաղորդումների ընդունման և գրանցման կարգը սահմանված է տարբեր ենթաօրենսդրական ակտերով, դժվար թե նպաստի օրինականության ամրապնդմանը, քանի որ դժվարացնում է օրենքի միատեսակ մեկնաբանությունը և կիրառությունը՝ արդյունքում խոչընդոտելով դատախազական հսկողության և դատական վերահսկողության արդյունավետությունը:

Այդ առումով Վ. Բուդչենկոն արդարացիորեն նշում է, որ քրեադատավարական հարցերը պետք է կարգավորվեն միայն քրեադատավարական օրենսգրքով, ինչպես նաև միջազգային նորմերով և պայմանագրերով: Մինևույն ժամանակ գործող պայմաններում իրավապահ տարբեր մարմինների աշխատակիցների լիազորությունները որոշակիորեն տարբերվում են միմյանցից, ինչն անթույլատրելի է քրեական դատավարության միատեսակ ընկալման տեսանկյունից²:

Համակարծիք ենք այն դատավարագետների հետ, ովքեր գտնում են, որ քրեական վարույթ նախաձեռնելու փուլում քրեական դատավարության բոլոր սուբյեկտների գործունեությունը պետք է կարգավորվի օրենքով, այլ ոչ թե ենթաօրենսդրական ակտերով, հակառակ դեպքում խնդրո առարկա փուլում պաշտոնատար անձանց գործունեության օրինականության նկատմամբ դատախազական հսկողությունն արդարացված չի լինի³:

Հանցագործությունների մասին հաղորդումների հաշվառման-գրանցման միասնական կարգի օրենսդրական կարգավորման անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, որոնց շարքում, Ե. Գ. Լիխտոլակի կարծիքով, էական են նախ՝ հանցագործությունների մասին հաղորդումների, դիմումների ըն-

¹ Տե՛ս 2018 թվականի ընթացքում հանցագործությունների քննության վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազի հաղորդում, էջ 2: <http://www.prosecutor.am/myfiles/files/pdf/Haxordum2018.pdf>:

² Տե՛ս **Будченко В.** Проверка поводов для возбуждения уголовного дела // Законность. – 2008. – № 11. – էջ 53:

³ Տե՛ս **Веретенников. Н.В.** Обеспечение прокурором законности в стадии возбуждения уголовного дела, Ростов – на – Дону, 2009, էջ 18:

դունման և գրանցման ժամանակ օրենքի պահանջների խստիվ կատարումը, որը կապահովի ինչպես հանցագործություններից տուժած, այնպես էլ այն կատարած անձանց իրավունքների պաշտպանությունը, ապա նաև հանցագործության մասին հաղորդումների հաշվառման-գրանցման կարգի թույլ տրվող խախտումների վերացումը¹:

Վերոգրյալի համատեքստում արձանագրելով մատնանշված խնդրի արդիականությունը՝ քրեադատավարական օրենքում «գրանցում» տերմինը նշված չէ որպես հանցագործության մասին հաղորդման քննության տարր, սակայն օգտագործվել է օրենսդրի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում՝ դատախազական հսկողության առարկայի մատնանշմամբ: Միևնույն ժամանակ ընդգծենք, որ հանցագործության մասին հաղորդումների գրանցման և հաշվառման կարգն արտացոլված է հիմնականում գերատեսչական նորմատիվ իրավական ակտերում՝ արդյունքում հաճախակի հանգեցնելով տարընթերցումների և բացերի:

Այդպիսի օրենսդրական բացի վառ օրինակ է «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված իրավակարգավորումը, որի համաձայն՝ ոստիկանությունը պարտավոր է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ընդունել, գրանցել և հաշվառել հանցագործությունների ու այլ իրավախախտումների, պատահարների վերաբերյալ դիմումներն ու հաղորդումները, դրանց տալ համապատասխան ընթացք: Չնայած դրան՝ մինչև 2017 թվականը ՀՀ կառավարությունն այդպիսի կարգ սահմանող որոշում չի ընդունել, սակայն գործնականում հանցագործությունների և պատահարների վերաբերյալ դիմումներն ու հաղորդումներն ընդունվում, գրանցվում, քննարկվում և հաշվառվում են ՀՀ ներքին գործերի նախարարի և գլխավոր դատախազի 1999 թվականի սեպտեմբերի 1-ի թիվ 12/354 համատեղ հրամանով, որը, սակայն, ՀՀ արդարադատության նախարարությունում պետական գրանցում չի ստացել, ուստի իրավաբանական ուժ չունի²:

Անհրաժեշտ ենք համարում ընդգծել նաև, որ հիշյալ խնդրով պայմանավորված՝ 2017 թվականին շրջանառության մեջ է դրվել «Հանցագործությունների, վարչական իրավախախտումների և պատահարների վերաբերյալ դիմումներն ու հաղորդումներն ընդունելու, գրանցելու, հաշվառելու և դրանց ընթացք տալու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Եվ միայն 2017 թվականի նոյեմբերի 23-ին ընդունվել է ՀՀ Կառավարության թիվ 1498-Ն որոշումը՝ ՀՀ Կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության կողմից հանցագործությունների, վարչական իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումներն ընդունելու, գրանցելու, հաշվառելու և դրանց ընթացք տալու կարգը սահմանելու մասին: Հետաքրքրական է, որ հետաքննություն իրականացնող մյուս մարմինների համար համապատասխան կարգ նախատեսված չէ:

Մատնանշված հարցի կապակցությամբ առկա է օրենսդրական նորմերի անհամապատասխանություն, որոնք կարգավորում են մի կողմից դատախազի հսկողական գործունեությունը, իսկ մյուս կողմից՝ պաշտոնատար անձանց գործունեությունը, որոնք դատախազական հսկողության առարկա են: Նման անհամապատասխանությունն այն է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը պարունակում է հանցագործությունների մասին հաղորդումների ընդունման և գրանցման դեպքում օրենքի պահանջների կատարումը ստուգե-

¹ St'u Лиходаев Е. Г. Деятельность прокурора по надзору за регистрацией сообщений о преступлениях // Вестник Саратов. гос. акад. права. – 2006. – № 6. – էջ 105-106:

² St'u <https://www.e-draft.am/ru/projects/16/justification>:

լու դատախազի պարտականությունը, մինչդեռ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 57-րդ, ինչպես նաև սույն իրավահարաբերությունները կարգավորող մյուս հոդվածները չեն նախատեսում որևէ դրույթ հանցագործության մասին հաղորդումների գրանցման պաշտոնատար անձանց պարտականության մասին:

Վերոգրյալի համատեքստում առաջարկում ենք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանել հանցագործությունների վերաբերյալ հաղորդումների հաշվառման, գրանցման միասնական դատավարական կարգ, որն ուղղակիորեն կնպաստի դատախազական հսկողության արդյունավետության բարձրացմանը՝ կանխարգելելով օրենսդրական անկատարությամբ պայմանավորված հաղորդումների չգրանցման դեպքերը: Գտնում ենք, որ հարցի՝ օրենքի մակարդակով կարգավորումը կնպաստի առկա խնդիրների վերացմանը, քանի որ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող փաստաթղթով կսահմանվի միատեսակ կարգավորումներ:

Մասնավորապես առաջարկում ենք ենթաօրենսդրական ակտերով սահմանված իրավակարգավորումները ներառել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում՝ ուղղակիորեն նախատեսելով, որ հանցագործության մասին հաղորդումն ընդունելիս դիմումատուին պետք է տրվի հանցագործության մասին հաղորդումն ընդունելու վերաբերյալ փաստաթուղթ՝ այն ընդունող պաշտոնատար անձի, ինչպես նաև այն ընդունելու ամսաթվի և ժամանակի մասին մատնանշմամբ: Այդպիսի փաստաթուղթ կարող է լինել, օրինակ՝ հանցագործության մասին հաղորդման ընդունման ու գրանցման մասին կտրոն-ծանուցագիրը, որը դիմումատուին պետք է տրվի իրավասու անձի ստորագրությամբ: Դրանք թույլ կտան արդյունավետ իրականացնել դատախազական հսկողություն՝ խստորեն պահպանելով հանցագործությունների մասին հաղորդումների գրանցման պահանջները: Կտրոն-ծանուցագիրը դիմումատուին տեղեկացնում է, որ հանցագործության մասին հաղորդումը գրանցվել է, դրա հիման վրա ստուգվելու են ենթադրյալ հանցագործության դեպքի առկայության մասին հաղորդված տվյալները, և կայացվելու է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված որոշումներից մեկը: Այն միևնույն ժամանակ դիմումատուին հնարավորություն կտա պաշտպանելու իր իրավունքները և օրինական շահերը հնարավոր անօրինական և չհիմնավորված ներգործությունից՝ գործողության կամ անգործության տեսքով, օրինակ՝ ներկայացված հաղորդմանը որևէ ընթացք չտալուց:

Միևնույն ժամանակ համակարծիք ենք Գ. Պ. Խիմիչևայի այն տեսակետին, որ պետք է ընդլայնել այն տեղեկությունների ցանկը, որոնք ներառվում են կտրոն-ծանուցագրում. մասնավորապես՝ այն պետք է պարունակի ծանուցում այն ժամկետի մասին, որի ընթացքում քննվում է հաղորդումը, այն պետական մարմինների մասին, որոնց կարող է հաղորդում ներկայացրած անձը բողոք ներկայացնել իրավապահ մարմինների գործողությունների և անգործության դեմ, ինչպես նաև բողոքարկման կարգի և ժամկետների վերաբերյալ¹:

Գտնում ենք, որ կտրոն-ծանուցագրում անհրաժեշտ է ներառել նաև տեղեկություններ հանցագործության մասին դիմումների և հաղորդումների քննարկման ժամկետների, ընդունվող որոշումների, դրանց բողոքարկման կարգի և հսկողություն իրականացնող պաշտոնատար անձանց վերաբերյալ:

Բացի այդ, հաշվի առնելով իրավապահ մարմինների որոշ աշխատակիցների հնարավոր անբարեխիղճ վարքագիծը՝ առաջարկում ենք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ամրագրել, որ. «Հանցագործության մասին հաղորդումն ընդունելու լիազորությամբ օժտված անձի կողմից չհիմնավորված մերժումը, ինչպես

¹ St`u Химичева Г. П. Возбуждение уголовного дела: проблемы правовой регламентации и совершенствования деятельности. Москва, 2003, – էջ 188:

նաև դիմումատուին կտրոն-ծանուցագրի հանձնելն անհիմն մերժելը և այդ դիմումի գրանցումը մերժելն անթույլատրելի են»:

Կարծում ենք, որ վերոնշյալ իրավակարգավորման պայմաններում լրացուցիչ երաշխիքներ կստեղծվեն հանցավորության լատենտայնության վերացման, ինչպես նաև ոչ բարեխիղճ պաշտոնատար անձանց գործունեության նկատմամբ դատախազական առավել արդյունավետ հսկողություն սահմանելու հարցում:

Գտնում ենք, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը պետք է սահմանի նաև հանցագործության մասին հաղորդումը գրանցելու դատավարական ժամկետները, որոնք ենթակա կլինեն անվերապահ կատարման և կներառվեն դատախազական հսկողության առարկայի մեջ:

Ինչպես նշում է Ն. Վետրեննիկովը, դատախազի ոչ միայն պարտավորությունը, այլ նաև մասնագիտական շահագրգռվածությունը պետք է լինի, որ հանցագործության մասին յուրաքանչյուր հաղորդում գրանցված լինի ժամանակին և ամբողջությամբ, պահպանվի գրանցման կարգը, ինչպես նաև պատշաճ դատավարական կարգով ձևակերպված հանցագործության մասին նշաններն արտացոլված լինեն համապատասխան փաստաթղթերում, կիրառվեն արձագանքման բոլոր անհրաժեշտ միջոցները, պահպանվեն ժամկետները, իսկ հանցագործության մասին հաղորդում տված անձինք պատշաճ կարգով ծանուցվեն¹:

Գտնում ենք, որ անհրաժեշտ է ուժեղացնել նաև հանցագործությունների մասին հաղորդումների ու դիմումների հաշվառման ու գրանցման ուղղությամբ իրավապահ մարմինների գործունեության օրինականության նկատմամբ դատախազական հսկողությունը, որը կարող է արդյունավետ իրականացվել բացառապես համապատասխան դատավարական կարգի հստակ սահմանման դեպքում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան կարգավորումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բացակայում են գործուն երաշխիքներ, որոնք հաղորդում ներկայացրած անձանց հնարավորություն կտան վերականգնելու իրենց խախտված իրավունքներն այն դեպքում, երբ իրավասու պաշտոնատար անձինք հրաժարվում են հանցագործության մասին հաղորդումներն ընդունելուց կամ գրանցելուց կամ դրանցում զետեղում են ոչ հավաստի տեղեկություններ:

Ս. Չուխոնցևն արդարացիորեն նշում է, որ քրեական գործի հարուցման փուլում օրինականության սկզբունքի կենսագործման մասին կարող են վկայել հանցագործության մասին դիմումն ընդունելու կամ գրանցելու անօրինական մերժման առիթով ներկայացված բողոքների քանակը և բնույթը²:

Հաշվի առնելով համապատասխան դեպքերում բողոքարկման հատուկ մեխանիզմների բացակայությունը՝ օբյեկտիվորեն հնարավոր չէ պարզել Հայաստանի Հանրապետությունում հիշյալ դեպքերի վիճակագրությունը:

Մինչդեռ ուսումնասիրելով Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգիրքը՝ կարող ենք արձանագրել, որ ռուս օրենսդրի մոտեցումն առավել քան ընդունելի է, քանի որ սահմանել է դատախազական հսկողության արդյունավետ մեխանիզմներ սույն ոլորտում: Մասնավորապես, Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատախազը պարտավոր է 3 օրվա ընթացքում (բացառիկ դեպքերում՝ 10 օրվա ընթացքում) քննել հանցագործության մասին հաղորդումների ստուգումը և

1 St' u **Веретенников. Н.В.** Обеспечение прокурором законности в стадии возбуждения уголовного дела, Ростов – на – Дону, 2009, էջ 29-30:

² St' u **Чухонцев С.** Практика надзора за рассмотрением сообщений о преступлениях // Законность. – 2006. – № 3. – էջ 3:

քննությունն իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ բողոքները, հանցագործության մասին հաղորդման ընդունման՝ հետաքննիչի, քննիչի, քննչական մարմնի ղեկավարի գործողությունների վերաբերյալ բողոքները:

Մատնանշված դրույթների իրավակիրառ պրակտիկայի վերլուծության արդյունքները ցույց են տվել, որ հանցագործության մասին հաղորդման ընդունումը մերժելու պաշտոնատար անձի անգործության դեմ բողոքները դատարանում չեն ստացել այնպիսի տարածում, ինչպես դատախազական հսկողության կարգով բողոքարկումը¹: Ռ. Մ. Իսանն այս առիթով նշում է, որ, ի տարբերություն դատական վերահսկողության, որն առավել տևական ժամանակ և ծավալուն ռեսուրսներ է պահանջում, դատախազները վերականգնում են քաղաքացիների խախտված իրավունքներն ավելի օպերատիվ եղանակով և փաստացի որևէ այլ գործընթացում չեն ընդգրկում տուժող քաղաքացիներին²:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ առաջարկում ենք հանցագործության մասին հաղորդումների ընդունման, ինչպես նաև քրեական վարույթ նախաձեռնելու փուլի ընթացքում համապատասխան պաշտոնատար անձանց գործողությունների (որոշումների) կամ անգործության դեմ բողոքների քննության առավել սեղմ ժամկետներ սահմանել: Գտնում ենք, որ «< քրեական դատավարության օրնսգրքով անհրաժեշտ է սահմանել դրույթ առ այն, որ «դատախազը պարտավոր է քրեական վարույթ նախաձեռնելու փուլում հետաքննության մարմինների գործողությունների (որոշումների) կամ անգործության դեմ ներկայացված բողոքները քննել և լուծել անհապաղ, բայց ոչ ուշ, քան դրանք ստանալուց հետո 24 ժամվա ընթացքում: Բողոքը ճանաչելով հիմնավորված՝ դատախազը պարտավոր է միջոցներ ձեռնարկել անձանց խախտված իրավունքների և օրինական շահերի վերականգնման ուղղությամբ»:

Առաջարկվող իրավակարգավորումն էականորեն կբարձրացնի դատախազական հսկողության արդյունավետությունը՝ վերջինիս «լուռ դիտորդից» վերածելով «ակտիվ սուբյեկտի», որն օժտված կլինի գործուն միջոցներով կանխարգելելու հնարավոր քրեադատավարական խախտումները և վերականգնելու արդեն իսկ թույլ տրված խախտումները:

Իրավակիրառ պրակտիկայում քրեական վարույթ նախաձեռնելու փուլում առավել հաճախ հանդիպող խախտումներից է հանցագործության մասին տեղեկությունները թաքցնելը³, որը հանգեցնում է հանցագործություն կատարած անձանց անպատժելիության: Այս երևույթը հաճախ կարող է պայմանավորված լինել իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց գերատեսչական շահագրգռվածությամբ, օրինակ՝ որակական և քանակական ցուցանիշների բարելավման նպատակով, որոնք ազդում են նրանց գնահատականի վրա: Այդ իսկ պատճառով դժվար բացահայտվող հանցագործությունները հաշվառումից թաքցնելը կարող է առերևույթ լավ աշխատանքի տպավորություն ստեղծելու գործուն միջոց դառնալ:

Հանցագործությունները կարող են թաքցվել հիմնականում երկու եղանակով՝ կա՛մ հանցագործության մասին հաղորդումը չընդունելու և այն չգրանցելու, կա՛մ ք-

¹ St`u **Волынский В. В.** Судебный контроль, прокурорский надзор и ведомственный процессуальный контроль на стадии возбуждения уголовного дела: назначение и соотношение // Российский следователь. – 2011. – № 9. – էջ 12:

² St`u **Исаева Р. М.** Социально-правовые основы обеспечения законности в стадии возбуждения уголовного дела: Автореф. дис. ... канд. юрид. наук: 12.00.09. – Уфа, 2007. – էջ 15:

³ St`u **Лиходаев Е. Г.** Деятельность прокурора по надзору за регистрацией сообщений о преступлениях // Вестник Саратов. гос. акад. права. – 2006. – № 6. – էջ 105-106:

րեական գործի հարուցումը մերժելու մասին անօրինական որոշում կայացնելու ճանապարհով:

Համակարծիք ենք Կ. Ի. Ամիրբեկովի այն դիրքորոշմանը, որ քրեական վարույթ նախաձեռնելու փուլում դատախազական հսկողության արդյունավետության գնահատման հիմնական չափանիշը առանց գրանցման թողնված հանցագործությունների մասին հաղորդումների բացահայտումն է և դրանց հաշվառումը¹:

Գտնում ենք, որ քրեական վարույթ նախաձեռնելու փուլում կարևոր նշանակություն ունի նաև դատախազական հսկողության ուժեղացումը հաղորդումն ըստ ենթակայության ուղարկելու դեպքերի կապակցությամբ: Հաճախ են հանդիպում դեպքեր, երբ հանցագործությունների մասին հաղորդումները չհիմնավորված կերպով հանձնվում են ըստ ենթակայության, որն արհեստականորեն լրացուցիչ բարդություններ է ստեղծում՝ քրեական վարույթ նախաձեռնելու փուլի օրենսդրական սեղմ ժամկետների պատճառով: Բացի այդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ հետաքննության մարմինը հարուցում է քրեական գործ, գործն ընդունում է իր վարույթ կամ ուղարկում է ըստ ենթակայության, ինչպես նաև սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան մերժում է քրեական գործ հարուցելը, քրեական գործ հարուցելու կամ գործի հարուցումը մերժելու մասին որոշման պատճենը 24 ժամվա ընթացքում ուղարկում է դատախազին՝ որոշման օրինականությունը ստուգելու նպատակով:

Վերոնշյալ դրույթի համակարգային վերլուծությունից պարզ է դառնում, որ գործող իրավակարգավորումների պայմաններում հաղորդումն ըստ ենթակայության հանձնելու դեպքում դատախազական հսկողությունն օբյեկտիվորեն դառնում է ձևական, քանի որ դատախազական հսկողություն իրականացնող սուբյեկտը տեղեկացված չի լինում դրա ընթացքից, դեռ ավելին՝ իր հսկողությունից դուրս գալու մասին: Միևնույն ժամանակ անհասկանալի է մնում նաև հետագա դատախազական հսկողություն իրականացնող սուբյեկտի հարցը, քանի որ վերջինս առհասարակ տեղեկացված չի լինում այդ մասին:

Վերոգրյալի համատեքստում առաջարկում ենք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում ևս նախատեսել նորմ, որը պարտականություն կսահմանի ինչպես այն հետաքննության մարմնի, քննիչի համար, որը հանցագործության մասին հաղորդումն ըստ ենթակայության հանձնում է, այնպես էլ նրանց համար, ովքեր ստանում են, անհապաղ ծանուցելու համապատասխանաբար հսկողություն իրականացնող դատախազին: Հիշյալ իրավակարգավումը կբացառի այդպիսի հաղորդումների չստուգված լինելու դեպքերը:

Ակնհայտ է, որ իրականացնելով հանցագործությունների մասին հաղորդումների և դիմումների ընդունման, գրանցման, հաշվառման և քննության ընթացքում իրավապահ մարմինների գործունեության օրինականության նկատմամբ դատախազական հսկողություն՝ դատախազը չի կարող իր ուշադրությունից դուրս թողնել գերատեսչական հսկողությունը: Այդ հարցի վերաբերյալ տեղեկություններ դատախազը կարող է ստանալ գերատեսչական ստուգումների տեղեկանքներից, հաշվառման գրքի նշումներից, գերատեսչական վերահսկողության ներկայացուցիչների գրավոր ցուցումներից, ինչպես նաև անձնական հարցման միջոցով²:

¹ St`u **Амирбеков К. И.** Критерии эффективности деятельности прокурора в сфере уголовного судопроизводства (концептуальный подход) // Вестник Академии Генеральной прокуратуры Российской Федерации. – 2012. – № 2 (28). – էջ 24-25:

² St`u **Костин Д. В.** Организация прокурорского надзора за соблюдением закона при приеме, регистрации, разрешении сообщений о преступлениях службой судебных приставов // «Черные дыры» в Российском законодательстве. – 2012. – № 4. – էջ 87:

Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ դատախազական հսկողությունն անկախ է գերատեսչական ազդեցությունից և կոչված է լինելու ապահովելու անձանց իրավունքների գործուն մեխանիզմ հանցագործությունների մասին հաղորդումների և դիմումների ընդունման, հաշվառման, քննության ընթացքում:

Գործող իրավակարգավորումների համակարգային վերլուծությունից պարզ է դառնում, որ հանցագործության մասին հաղորդումների ընդունման, գրանցման և ստուգման նկատմամբ օրենսդիրն ուղղակիորեն չի նախատեսել դատական վերահսկողության հնարավորություն: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն. «Դատարանի լիազորություններն են, մասնավորապես՝ (...) օրենքով նախատեսված դեպքերում քննել և լուծել հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների (անգործության) դեմ բողոքները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածը սահմանում է.

«1. Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

2. Սույն հոդվածի առաջին մասում նշված անձինք իրավունք ունեն նաև դատարան բողոքարկել հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի հրաժարվելը, ինչպես նաև քրեական գործը կասեցնելու, կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում (...):»:

Մեջբերված նորմերի վերլուծությունից հետևում է, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում օրենսդիրը դատարանին լիազորել է քննելու ոչ միայն քրեական վարույթ իրականացնող իրավասու մարմինների ու պաշտոնատար անձանց որոշումների և գործողությունների, այլև անգործության դեմ բերված բողոքները: Չնայած անգործության և ոչ իրավաչափ գործողության դատական բողոքարկումը հետապնդում է իրավունքների պաշտպանության համանման նպատակ, սակայն «գործողություն» և «անգործություն» իրավական եզրույթները նույնաբովանդակ մեկնաբանվել չեն կարող այն պայմաններում, երբ օրենսդիրը սահմանել է դրանց բողոքարկման տարբեր ընթացակարգեր: Մասնավորապես՝ վարույթն իրականացնող մարմինների գործողությունների (որոշումների) դատական բողոքարկման համար նախատեսված է դրանք դատախազին բողոքարկելու պարտադիր պահանջ (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մաս), ինչպիսին բացակայում է անգործության բողոքարկման ընթացակարգում: Հետևաբար, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ նախապես դատախազին բողոքարկելու պահանջը կիրառելի չէ դատավարության մասնակից ձանաչելու պահանջը լուծելու կապակցությամբ վարույթն իրականացնող մարմնի անգործությունը բողոքարկելու իրավահարաբերությունների նկատմամբ:

«Անգործություն» եզրույթն իրավակիրառական պրակտիկայում պետք է ընկալվի որպես վարույթն իրականացնող համապատասխան մարմնի՝ Սահմանադ-

րությամբ և օրենքներով նախատեսված լիազորությունների (որոշումների ընդունում, իրենց լիազորություններից բխող գործունեության իրականացում) չկատարում¹:

Գտնում ենք, որ հետաքննության մարմնի, քննիչի «գործողության» և «անգործության» բողոքարկման տարբերակված կարգը չի բխում դատախազության մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված գործառույթից, քանի որ օրինականության տեսանկյունից «անգործությունը» ևս դատախազական հսկողության օբյեկտ է: Մինչդեռ, բողոքարկման տարբերակված կարգ սահմանելով, օրենսդիրը հնարավորություն է ընձեռում շրջանցելու դատախազական հսկողությունը, որն էլ բովանդակագրկում է ամրագրված երաշխիքները:

Վերոգրյալի համատեքստում կարող ենք արձանագրել, որ հանցագործության մասին հաղորդումների ընդունման, գրանցման և ստուգման փուլում, հաշվի առնելով ժամանակային տղությունը, դատական վերահսկողությունն արդյունավետ չէ, ուստի հետաքննության մարմնի, քննիչի անգործության դատական բողոքարկման դեպքում ևս պետք է պարտադիր լինի դատախազին բողոքարկված լինելու հանգամանքը: Հակառակ դեպքում անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հարցում կանտեսվի առավել արդյունավետ և օպերատիվ պաշտպանության միջոցը, այն է՝ դատախազական հսկողությունը:

ПРОКУРОРСКИЙ НАДЗОР ЗА ПРИЕМОМ, РЕГИСТРАЦИЕЙ И ПРОВЕРКОЙ ЗАЯВЛЕНИЙ О ПРЕСТУПЛЕНИИ

Тигран Казарян

Аспирант Кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ

В результате приема, регистрации, проверки и разрешения вопросов о возбуждении уголовного дела на основе собранных материалов, в практике допускаются многочисленные злоупотребления со стороны правоохранительных органов, которые непосредственно приводят к нарушению прав и законных интересов с одной стороны, и лиц, подавших заявления и возможных потерпевших, с другой стороны: лиц, предположительно совершивших преступление. По этой же причине в стадии инициации уголовного процесса с целью обеспечения законности, законодатель сделал деятельность указанных органов объектом прокурорского и судебного надзора.

Установление соответствующих механизмов преследует цель не только обнаружения и уничтожения правонарушений, но и их предотвращения, имея перед собою задачу обнаружения случаев сокрытия с учета преступлений в стадии возбуждения уголовного дела, также исключения таких случаев, раскрытия случаев необоснованно принятых решений о возбуждении или отказах от возбуждении уголовного дела.

¹ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ ՍԴՈ-844 որոշման 7-րդ կետ:

PROSECUTORIAL SUPERVISION TOWARDS THE RECEIPT, REGISTRATION AND VERIFICATION OF CRIME REPORTS

Tigran Ghazaryan

PHD Student at the YSU Chair of Criminal procedure and criminalistics

As a result of receiving, registering, inspecting, and preparing materials for criminal reports, the law enforcement agencies allow numerous abuses in practice that directly lead to from on one hand to the violation of the legal interests of the people who presented reports. Alleged victims and on the other hand, to the violation of the rights and legitimate interests of the person who has allegedly committed a crime. Therefore, in order to ensure legality at the stage of initiating criminal proceedings, the legislature has made the activities of the mentioned bodies designated subject to prosecutorial control and judicial supervision, also emphasizing the role and importance of the stage of initiating criminal proceedings.

The fixation of the proper mechanisms aims to not only detect and eliminate the legal infringements, but also to prevent them, having as their object the discovery, elimination, prosecution or discovery of groundless denial of initiating a criminal proceeding at the stage of criminal proceedings.

Բանալի բառեր - քրեական վարույթ նախաձեռնել, ենթադրյալ հանցանք կատարած անձ, քրեական գործի հարուցում, դատախազական հսկողություն, հաղորդումների ընդունում, գրանցում, ստուգում, դատական վերահսկողություն

Ключевые слова: инициировать уголовный процесс, лицо, предположительно совершившее преступление, возбуждение уголовного дела, прокурорский надзор, прием, регистрация и проверка заявлений, судебный надзор

Key words: to initiate criminal proceeding, a person who has allegedly committed a crime, to initiate a criminal case, prosecutorial supervision, acceptance of reports, registration, inspecting, judicial supervision